ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

ք.Երևան «12» մայիս 2023 թ N 641-Ա

ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 16-Ի N 1086-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունիսի 13-ի N 623-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 41.1-րդ կետով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 658-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 21-րդ ենթակետով՝

հ ր ա մ ա յ ու մ ե մ.

1. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2022 թվականի հունիսի 16-ի ««ԷՄ ՋԻ ԷՔՍՊԵՐՏ» ՍՊԸ արտադրանքի սերտիֆիկացման մարմնին Հայաստանի Հանրապետության (ՀՀ) և Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) տեխնիկական կանոնակարգերով սահմանված արտադրանքի (օբյեկտի) և ցուցանիշների համապատասխանության գնահատման գործունեություն իրականացնող մարմին նշանակելու մասին» N 1086-Ա հրամանում (այսուհետ՝ Հրաման) կատարել հետևյալ լրացումները.

1) Հրամանի 1-ին կետում «N 1-Բ» բառից հետո լրացնել «N 2 (A 1)» բառերը
2) Հրամանի հավելվածի 14-րդ կետից հետո լրացնել նոր 15-րդ կետ հետևյալ բովանդակությամբ.

«15. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2021 թվականի հոկտեմբերի 29-ի N 110 որոշմամբ հաստատված «Թռչնի մսի և դրա վերամշակումից ստացվող արտադրանքի անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգ (ԵԱՏՄ ՏԿ 051/2021)»:

3) Հիմք ընդունելով սույն հրամանի 1-ին կետը՝ համապատասխանության գնահատման մարմնի նշանակման N Ն-28 վկայականը վերաձևակերպել և տրամադրել նշանակման նոր վկայական:

4) «ԷՄ ՋԻ ԷՔՍՊԵՐՏ» ՍՊԸ և «ՌԵՍՈ» ապահովագրական ՓԲԸ միջև կնքված մասնագիտական պատասխանատվության ապահովագրության վկայագրի գործողության ժամկետի ավարտից (N PI003755 մասնագիտական պատասխանատվության ապահովագրության վկայագրի գործողության ժամկետն ավարտվում է 2024 թվականի մարտի 15-ը ներառյալ) 1 օր հետո Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարությանը տրամադրել մասնագիտական պատասխանատվության ապահովագրության նոր վկայագիր:

2. Սույն հրամանի 1-ին կետով նախատեսված փոփոխությունները գրանցել Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 3-ի N 801-Ա հրամանով հաստատված համապատասխանության գնահատման նշանակված մարմինների գրանցամատյանում:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ն. Տերյանին:

ՎԱՀԱՆ ՔԵՐՈԲՅԱՆ

Recoverable Signature

X

ՎԱՀԱՆ ՔԵՐՈԲՅԱՆ

Signed by: KEROBYAN VAHAN 1110760124